ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-180-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«է) ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն անկանխիկ եղանակով : Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից, բացառությամբ ոչ ռեզիդենտ նույնականացված խաղացողների, խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2. 1-ին մասի զ1-ին և զ2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ1) շահումը փոխանցում (վճարում) է անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով»,

«զ2) չի կարող շահումը փոխանցել (վճարել) այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները, ինչպես նաև արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 2.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.2 Օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:»:

Հոդված 4. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Երկրորդ ընթերցում
(Պ-180-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«է) ապահովում է խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն անկանխիկ եղանակով : Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից, բացառությամբ ոչ ռեզիդենտ նույնականացված խաղացողների, խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2. 1-ին մասի զ1-ին և զ2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«զ1) շահումը փոխանցում (վճարում) է ~~բանկային պրակտիկայում ընդունված~~ անկանխիկ եղանակով՝ հայկական դրամով»,
~~«զ2) արգելվում է շահումը փոխանցել (վճարել) այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները, ինչպես նաև արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»:~~
«զ2) չի կարող շահումը փոխանցել (վճարել) այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված անկանխիկ վճարները, ինչպես նաև արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»

Հոդված 3. ~~Սույն~~ Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 2.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.
«2.2 Օրենքով սահմանված անկանխիկ գործարքները պետք է իրականացվեն միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով:»:

~~**Հոդված 4. Անցումային դրույթներ**~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~
~~2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կարգավորումները ուժի մեջ են մտնում վեց ամիս հետո:~~

Հոդված 4. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-180-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011/1), «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-180[1]-02.03.2022,11.04.2022-ՖՎ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկվում է վերնագրում «փոփոխություններ» բառից հետո լրացնել «և լրացում» բառերը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 2--րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ հոդվածով շարադրվող գ1) կետից հանել «բանկային պրակտիկայում ընդունված» բառերը	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ	Առաջարկվում է 2-րդ հոդվածով շարադրվող գ2) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ2) չի կարող շահումը փոխանցել (վճարել) այն հաշիվներին, որոնցից չեն կատարվել մասնակցության համար նախատեսված		

		կատարելու մասին օրենքի նախագծի 2--րդ հոդված	անկանխիկ վճարները, ինչպես նաև արգելվում է անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման դեպքում մասնակցության համար նախատեսված վճարների ընդունումը և շահումների տրամադրումը կանխիկ գումարով.»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3--րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ հոդվածի «Սույն օրենքի» բառերը փոխարինել «Օրենքի» բառով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	**ՀՀ կառավարություն**	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 4--րդ հոդված	Առաջարկվում է 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
6.	**ՀՀ կառավարություն**	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկվում է վերնագրում «փոփոխություններ» բառից հետո լրացնել «և լրացում» բառերը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	**ՀՀ կառավարություն**	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով կարգավորվող «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		մասին օրենքի նախագծի 2-րդ հոդված	մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2. Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել կանխիկ եղանակով: Նշված հաշիվները համալրվում են, և հաշիվներից գումարը ելքագրվում է միայն անկանխիկ եղանակով: Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:»:		
8.	**ՀՀ կառավարություն**	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է 3-րդ հոդվածի «Սույն Օրենքի» բառերը փոխարինել «Օրենքի» բառով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
9.	**ՀՀ կառավարություն**	«Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածն շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: